




ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Պետրոս ծնած է Բեթսայիդա քաղաքին մէջ, ապա բնակութիւն հաստա-
տած է Կափառնայումի մէջ: Իսկ արհեստով վարպետ ձկնորս մըն էր: Բնա-
ւորութեամբ եղած է գործունեայ, եռանդուն, համարձակ եւ յանդուգն: Առա-
քեալ դառնալէն առաջ ունեցած դիրքը եւ գործունեայ ձիրքը, ինչպէս նաեւ
ամէնէն առաջ Քրիստոսի աշակերտած ըլլալը իրեն համար առաւելութիւն-
ներ նկատուեցան: Այս պատճառով Մատթէոս ատեարանիչը Առաքեալնե-
րու անուանացանկին սկիզբը կը գրէ Պետրոսին անունը: Սակայն պէտք է
յիշել, թէ ան ոչ մէկ ատեն Առաքելապետ եւ կամ Քրիստոսի փոխանորդը
նշանակուած է: Քրիստոս տասներկու հաւասար ընկերներ ընտրեց եւ ոչ
թէ գլուխ մը եւ տասնմէկ ենթակայ Առաքեալներ: Պետրոս Քրիստոսի աշա-
կերտելէ առաջ աշակերտած էր Յովհաննէս Մկրտչի:

Այժմ Պետրոսի մասին Աւետարանական մի քանի մէջբերումներ.

«Երբ Սիմոն Պետրոս այս տեսաւ՝ ինկաւ Յիսուսի ծունկերուն վրայ ու ըսաւ. Հեռո՛ւ գնա ինձմէ, Տէ՛ր, վասնզի ես մեղաւոր մարդ մըն եմ» (Ղուկ. 5:8):

«Սիմոն Պետրոս պատասխանեց անոր. Տէ՛ր, որո՞ւն պիտի երթանք:

«Պետրոս ըսաւ անոր. Այո՛, Տէ՛ր, եւ դուն գիտես որ կը սիրեմ քեզ: Յիսուս ըսաւ անոր. Արածէ՛ իմ գառնուկներս» (Յով. 21:15):

Արդարեւ Պետրոս Առաքեալ արժանի է գնահատութեան: Հայց. Առաքելական Ս. եկեղեցին զինք կը կոչէ Գլխաւոր Առաքեալներէն մին: Իր կեանքով, բնատրութեամբ եւ գործով ան յատուկ տեղ մը կը գրաւէ Առաքեալներուն մէջ: Բնական է, որ իւրաքանչիւր Առաքեալ իրեն յատուկ ձիրքեր ունէր: Սակայն երբեմն Պետրոս Առաքեալ յանդգնաբար կ'ամբողջացներ միւսներուն պակաս ձգածները:

Պետրոս Առաքեալ ղեկավարող եւ առաջնորդող դիրքի մը մէջ գըտնրուած է իր բնատուր նկարագրին համաձայն: Որպէս արհեստավարժ եւ վարպետ ձկնորս մը, ան ըմբռնած է ջուրին եւ ծովին կեանքը: Արդարեւ ծովը իր կեանքը եղած էր:

Ուրեմն, որպէս ընտրուած Առաքեալ մը, Աւետարանական պատմութիւններուն մէջ աչքառու է Պետրոս: Ան յաճախ առաջին անձն է արտայայտուելու եւ ներգործական դիրք մը բռնելու: Պետրոս Վէմն է, ինչպէս Քրիստոս կոչած է զինք՝ իր բնատրութիւնը նկատի առնելով. «Եւ ես կ'ըսեմ քեզի, որ դուն վէմ ես, եւ այդ վէմին վրայ պիտի շինեմ իմ եկեղեցիս, եւ դժոխքի դռները պիտի չյաղթահարեն զայն» (Մատթ. 16:18): Ան ամուր եւ զօրաւոր էր վէմի մը պէս: Սակայն իբրեւ մարդ միշտ դիւրին չէ ամուր եւ հզօր մնալը: Նեղ է յափտեմական կեանքի ճամբան եւ հաստատուն ու անալլալ կամք կը պահանջուի նպատակի մը իրագործումի համար: Անտարակոյս, հզօրներն ալ կ'ունենան իրենց տկարութիւնները, վախերը, տատամսումները եւ յուսահատութեան վայրկեանները: Պետրոս Առաքեալ ունէր խոնարհ հոգի եւ ազդեցիկ բնատրութիւն մը եւ տէրն էր իր խղճին՝ ունենալով կակուղ սիրտ մը: Այս առաքինութիւններն են որ զինք կը բարձրացնեն: Իր առաւելութիւններու կողքին ան գիտակից էր իր թերութիւններուն եւ մարդկային տկարութիւններուն. ան կը ճանչնար ինքզինքը: Այս լոյսին տակն է, որ ան ի յայտ կու գայ Նոր Կտակարանին մէջ, իր առաջին իսկ մուտքով:

Ղուկասի Աւետարանին մէջ կը կարդանք: Անոնք ամբողջ գիշեր մը ձկնորսութեամբ զբաղուեցան եւ ոչինչ բռնեցին: Անկասկած չափազանց յոգնած էին եւ յուսախաբուած: Յանկարծ Յիսուս Գալիլիոյ Լիճին եզերքը եկաւ եւ ըսաւ Սիմոնի. «Քշէ՛ տար դէպի խորերը, եւ ձեր ոռկանները նետեցէք որսալու համար: Սիմոն պատասխանեց եւ ըսաւ. Վարդապետ, ամբողջ այս գիշեր չարչարուեցանք եւ ոչինչ բռնեցինք, բայց քու խօսքիդ համար պիտի նետենք ոռկանները: Երբ այդ ըրին՝ մեծ քանակութեամբ ձուկեր ներփակեցին, այն աստիճան որ անոնց ոռկանները կը պատռուէին» (Ղուկ. 5:4—7):

Յակոբոս եւ Յովհաննէս չափազանց զգայուն էին: Սակայն Պետրոս կատարուած հրաշքը տեսնելով, վազելով կու գայ Յիսուսի մօտ, կ'իյնայ անոր ծունկերուն վրայ եւ բարձր ձայնով կ'ըսէ. «Հեռո՛ւ գնա ինձմէ, Տէ՛ր, վասնզի ես մեղաւոր մարդ մըն եմ» (Ղուկ. 5:8): Ան իր հոգեկան յոյզերը չի կրնար զսպել եւ անկեղծութեամբ կը խոստովանի, թէ ինք մեղաւոր անձ մըն է: Սակայն Յիսուս Պետրոսի մօտենալով կ'ըսէ. «Մի՛ վախճար, այսուհետեւ մարդէ՛ր պիտի որսաս կեանքի համար» (Ղուկ. 5:11): Յակոբոս, Յովհաննէս եւ Պետրոս ականատես ըլլալով այս հրաշքին եւ լսելով մեր Տիրոջ խօսքերը, նաւակը ցամաք հանելով՝ թողուցին ամէն բան եւ հետեւեցան Քրիստոսի:

Անաւասիկ Պետրոսի խոնարհ ոգին, որ արտացոլաց իր ամբողջ կեանքի ընթացքին: Նոր Կտակարանը մեզի կը սորվեցնէ, թէ Աստուած շնորհք

կու տայ խոնարհներուն: Արդարեւ Պետրոսի եւ Յովայի միջեւ տարբերութիւնը այն է, որ երկուքն ալ ուրացան Քրիստոսը, սակայն Պետրոս կրցաւ իր խոնարհ հոգիով եւ զգացումով դուրս գալ յուսալքումէ եւ թողութիւն հայցել Քրիստոսէ: Իսկ Յովա բնաւ ինքզինքը խոնարհեցնելով զղջումի չեկաւ եւ իր մեծագոյն մեղքին համար թողութիւն չխնդրեց մեր Տիրոջմէն: Որպէս զգայուն հոգիի մը տէր, Պետրոս դառնապէս լացաւ իր մեղքին համար: Ան բնաւ չփորձեց ինքզինքը արդարացնել, այլ քաջաբար խոստովանեցաւ իր մեղքը:

Իր կեանքի վերջաւորութեան Պետրոս իր հետեւեալ առաքելական նաւակին մէջ անգամ մըն ալ կը յայտնէ իր կակուղ հոգին եւ խիղճը, գրելով. «...ձեր հաւատքով ձեռք բերէք առաքինութիւն, առաքինութեամբ՝ գիտութիւն, գիտութեամբ՝ ժուժկալութիւն, ժուժկալութեամբ՝ համբերատարութիւն, համբերատարութեամբ՝ աստուածապաշտութիւն, աստուածապաշտութեամբ՝ եղբայրասիրութիւն, եղբայրասիրութեամբ ալ՝ սէր: Երբ դուք այս բաները ունենաք եւ ճոխանաք ասոնցմով՝ ասոնք դատարկ եւ անպտուղ չեն թողոր ձեզ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի մասին ձեր ունեցած գիտութեան մէջ: Իսկ ան՝ որուն մէջ չկան այս բաները, կոյր է կամ կարճատես եւ մոռացութեան տուած իր նախկին յանցանքներէն մաքրուած ըլլալը» (Բ. Պետրոս 5:9):

Պետրոս երբեմն ձախողութիւններու կը մատնուի: Օր մը երբ Առաքելակներ նաւով Գալիլիոյ Լիճին միւս ափը կ'անցնէին, յանկարծ սաստիկ փոթորիկ մը ելաւ եւ բնական է բոլորը սարսափահար եղած էին: Անոնք խորհեցան, որ ուրուական մը կը քալէր ծովուն վրայ: Պետրոս ալ հոն էր եւ շատ վախցած: Կը կարծէին, թէ բոլորին վերջը եկած էր: Սակայն ձայն մը կ'ըսէ. «Սրտապնդուեցէ՛ք, ե՛ս եմ, մի՛ վախճաք: Պետրոս պատասխանեց անոր ու ըսաւ. Տէ՛ր, եթէ դուն ես՝ հրաման տուր ինձի ջուրերուն վրայէն քեզի գալ: Եւ Յիսուս ըսաւ՝ եկո՛ւր: Եւ Պետրոս նաւակէն իջնելով՝ քալեց ջուրերուն վրայէն ու եկաւ Յիսուսի մօտ: Սակայն տեսնելով ուժգին քամին՝ վախցաւ: Եւ երբ սկսաւ ընկղմիլ՝ աղաղակեց ու ըսաւ. Տէ՛ր, փրկէ զիս» (Մատթ. 14:27—30):

Պետրոս նախ քաջաբար ուզեց քալել ծովուն վրայ, սակայն հազիւ թէ Քրիստոսի շնորհիւ մի քանի քայլեր առաւ, յանկարծ սթափեցաւ եւ խորհեցաւ, թէ ի՛նչ կ'ընէ: Այդ վայրկեանին վախը մէջը մտաւ եւ սկսաւ ջուրին մէջ ընկղմիլ եւ խնդրեց, որ Տէրը զինք ազատէ այս վտանգէն: «Եւ Յիսուս անմիջապէս երկարեց իր ձեռքը, բռնեց զայն ու ըսաւ. Թերահաւա՛տ, ինչո՞ւ երկմտեցար: Եւ երբ անոնք նաւակ ելան՝ քամին հանդարտեցաւ: Եւ անոնք որ նաւակին մէջ էին՝ մօտեցան, երկրպագութիւն ըրին Անոր ու ըսին. Արդարեւ Աստուծոյ Որդին ես դուն» (Մատթ 14:31—33): Մենք ալ մեր կեանքին մէջ յաճախ անգիտակցաբար եւ կամ ալ պարագաներէն տարուած կ'ընկղմինք մեղքի տիղմին մէջ: Սակայն եթէ մենք ալ մեր ներութեան օրերուն Քրիստոսի պաշտպանութիւնն ու օգնութիւնը հայցենք, Ան մեր ալ ձեռքերէն բռնելով վեր պիտի հանէ մեզ՝ մեր հոգեկան խոր անկումէն:

Տեսանք, թէ Առաքելակներ խոստովանեցան որ Քրիստոս Աստուծոյ Որդին էր: Ուրիշ առիթով մը Քրիստոս հետեւեալ կենսական հարցումը ուղղեց Առաքելակներուն. «Իսկ դուք իմ մասին ի՛նչ կ'ըսէք, ո՞վ եմ ես: Սիմոն Պետրոս պատասխանեց ու ըսաւ. Դուն Քրիստոսն ես՝ կենդանի Աստուծոյ Որդին» (Մատթ. 16:15—16):

Քրիստոս յատակ ըրաւ Պետրոսին, թէ այդ խոստովանութիւնը իր մէջէն եկած չէր, այլ Աստուծոյ կողմէ յայտնուած էր իրեն: Ապա Քրիստոս ասելցուց, ըսելով. «Եւ ես կ'ըսեմ քեզի, որ դուն վէմ ես, եւ այդ վէմին վրայ պիտի շինեմ իմ եկեղեցիս, եւ դժոխքի դռները պիտի չյաղթահարեն զայն» (Մատթ. 16:18—19):

Առաքեալներ զարմացան երբ առաջին անգամ Քրիստոս անոնց յայտնեց, թէ ինք պէտք է չարչարուէր եւ մեռնէր մարդոց հոգիներու փրկութեան համար: Պետրոսին համար անըմբռնելի բան մըն էր ասիկա եւ անմիջապէս համաձայն իր կրակոտ նկարագրին, համարձակութեամբ ըսաւ «Քա՛ւ լիցի քեզ, Տէ՛ր, այդ բանը քեզի չի պատահիր: Եւ ան դառնալով Պետրոսին ըսաւ. Ետի՛ս գնա, սատանա՛յ, դուն գայթակղութիւն ես ինծի համար, որովհետեւ քու մտածումներդ Աստուծոյ մտածումները չեն, այլ՝ մարդոց» (Մատթ. 16:22—23):

Բնական է Պետրոս սատանայ մը չէր, այլ մեզի նման մարդ մը, որ պիտի չուզէր իր Վարդապետին մահը: Ան տակաւին չէր թափանցած փրկագործութեան գաղափարին: Ասիկա նոյն Առաքեալն էր, որուն համար քիչ մը առաջ Քրիստոս «Դուն վէմ ես» ըսաւ «եւ քեզի պիտի տամ երկինքի արքայութեան բանալիները» (Մատթ. 16:19): Քրիստոս համահաւասար իշխանութիւն տուած էր բոլոր Առաքեալներուն՝ երթալու, քարոզելու, բժշկութիւններ կատարելու եւ իր վկաները հանդիսանալու: Սակայն մարդկային նկարագրին անհամապատասխան բան մը չէր, երբ Քրիստոս զինք վէմ կը կոչէր, Պետրոս Առաքեալ ներքին հպարտութիւն մը կը զգար եւ ասելի յանդուգն կը դառնար այսպիսի գովասանական խօսք լսելով Քրիստոսէ: Մօտ երեք տարի աշակերտեցաւ Յիսուսի, մնաց զօրաւոր, անշէղ եւ հաւատարիմ:

Պետրոս հոգեկան ցնցում մը ունեցաւ, երբ Քրիստոս Երուսաղէմի Վերնատան մէջ Վերջին Ընթրիքի ընթացքին ի մտի ունենալով իր մօտալուտ մատնութիւնը, չարչարանքները եւ խաչելութիւնը, ըսաւ Առաքեալներուն. «Այս գիշեր ամէնքդ ալ պիտի գայթակղիք իմ պատճառովս, որովհետեւ գրուած է. Պիտի հարուածեմ հովիւը, եւ ոչխարները պիտի ցրուին: Բայց իմ յարութենէս յետոյ ձեզմէ առաջ Գալիլեա պիտի երթամ: Պետրոս պատասխանեց եւ ըսաւ անոր. Եթէ նոյնիսկ ամէնքն ալ գայթակղին, գոնէ ես՝ ոչ: Յիսուս ըսաւ անոր. Ճշմարիտ կ'ըսեմ քեզի, որ դուն այս գիշեր իսկ դեռ աքաղաղը չկանչած, երեք անգամ պիտի ուրանաս զիս: Իսկ Պետրոս ասելի եւս կը պնդէր ու կ'ըսէր. Եթէ քեզի հետ մեռնիլ իսկ հարկ ըլլայ՝ պիտի չուրանամ քեզ: Եւ ամէնքն ալ նոյնը կ'ըսէին» (Մարկոս 14—27:31):

Գերսեմանիի Զորին մէջ Պետրոս, Յակոբոս եւ Յովհաննէս ականատես եղան Քրիստոսի վերջին տագնապին եւ մատնութեան: Երբ Յուդա համբուրելով մատնեց մեր Տէրը եւ զինուորները ձերբակալեցին Մեծ Վարդապետը, Պետրոս անմիջապէս իր սուրը քաշելով զարկաւ քահանայապետի ծառային ու անոր աջ ականջը կտրեց: Այդ գիշեր Քրիստոսի ձերբակալութեամբ, ըստ իր կանխասացութեան բոլոր Առաքեալներն ալ վախճան եւ զինք լքեցին: Իրապէս կը կատարուէին Քրիստոսի խօսքերը: Պետրոս անորոշութեան մատնուած էր: Ան ականայ հետեւեցաւ ամբոխին եւ հասաւ քահանայապետին գաւիթը. մտազբաղ էր եւ մտաւանջ վիճակ մը ունէր:

Գիշերը ցուրտ էր, ուստի վառուած կրակին մօտ գնաց ինքզինքը տաքցընելու համար: Զղային եւ անհանգիստ վիճակ մը ունէր՝ մինչ շուրջինները անտարբերութեամբ եւ ինչո՞ւ չէ, հրճուանքով ու կատակով կը խօ-

սակցեին Երուսաղէմի մէջ տեղի ունեցած վերջին իրադարձութիւններուն շուրջ:

Քահանայապետի աղախիներէն մին, որ շատ հաւանաբար նախապէս տեղ մը տեսած էր Պետրոսը, տարօրինակ նայուածք մը նետեց անոր վրան եւ ըսաւ. «Դուն ալ Յիսուս Նազովրեցիին հետ էիր» (Կարդալ Մարկոս 14:66—72): Ամբոխին մէջէն շատեր իրենց հայեացքը ուղղած էին Պետրոսին, մինչ ինք ամօթահար վար կը պահէր իր աչքերը՝ նայելով կրակին: Քիչ ետք ուրիշ աղջիկ մը մօտենալով, Պետրոսի մասին ըսաւ ժողովորդին. «Աս ալ անոնցմէ է»: Պետրոս այս անգամ ատելի բարձրացնելով իր ձայնը ուրացաւ մեր Տէրը: Այս Վէմ Առաքեալը մի քանի ժամ առաջ կ'ըսէր, թէ եթէ բոլորը ուրանան Քրիստոսը, ինք բնաւ պիտի չուրանար զինք, եւ ի պահանջել հարկին պատրաստ էր մեռնելու Քրիստոսի համար: Սակայն ի՞նչ կը պատահէր հիմա: Վէմը կամաց կամաց սկսած էր հալիլ...: Քիչ ետք, հաւանաբար զինուորներէն մէկը, որ Քրիստոսի ձգբակալութեան մասնակցած էր եւ զինքը տեսած Գեթսեմանիի Զորին մէջ, հայեացքը ուղղեց Պետրոսին, եւ Պետրոս ալ զգաց պատահելիքը եւ արիւնը գլխուն խոծեց: Զինուորը ըսաւ. «Արդարեւ, դո՛ւն ալ անոնցմէ ես, քանի որ Գալիլիացի ես, եւ քու խօսուածքդ ալ շատ նման է: Եւ ան սկսաւ ինքզինքն ճշտել, երդում ընելու ըսել. Զեմ՝ ճանչնար այն մարդը, որու մասին կը խօսիք դուք: Եւ նոյն պահուն աքաղաղը երկրորդ անգամ կանչեց: Եւ Պետրոս յիշեց այն խօսքը, որ Յիսուս ըսած էր իրեն. Աքաղաղը դեռ երկու անգամ չկանչած՝ դուն երեք անգամ պիտի ուրանաս զիս: Եւ սկսաւ լալ» (Մարկոս 14:70—72):

Ահա միշտ այդ լռակէին աստիճաններուն վրայ կը տեսնուի Քրիստոս, որ շուտափոյթ կտրւով դատուած էր եւ դատապարտուած: Ան կ'առաջնորդուէր դէպի Պիղատոսի սրահը: Քրիստոս քալելու ատեն վար կը նայի եւ ահա բոլորը, ինչպէս նաեւ Պետրոս վեր կը նային: Քրիստոսի եւ Պետրոսի աչքերը իրար կը հանդիպին: Պետրոս կը հասկնայ ամէն բան եւ կը վերջիշէ իրեն համար ըսուածը: Հազիւ թէ ինքզինքը կը զսպէ եւ գաիթէն դուրս ելլելով կը սկսի դառնօրէն լալ եւ զղջալ: Վէմը աւագի վերածուած էր...:

Այդ գիշեր հոգեկան մեծ հարուած մը տրուած էր Պետրոսին: Վէմը որ անխախտ պիտի մնար, խախտած էր եւ իր զղջումով տեսակ մը հոգեփոխութեան ենթարկուած էր Պետրոս եւ ինք կը զգար այդ փոփոխութիւնը իր մէջ: Արդեօք ներումի արժանի պիտի ըլլա՞ր ան իր այս ուրացումներուն համար: Պետրոս անմիջապէս յիշեց Քրիստոսի խօսքը, թէ մենք պէտք է ներենք եօթանասուն անգամ եօթը: Սակայն նախ Պետրոս պիտի կարենա՞ր ինքզինքին ներել՝ նախքան Քրիստոսէ ներում խնդրելը: Այս մտատանջութեան մէջ էր ան: Ոչ կրնար քնանալ եւ ոչ ալ կրնար ուտել: Զափազանց մեղաւոր կը զգար ինքզինք:

Քրիստոսի խաչելութեան եւ թաղման յաջորդեց իր Հրաշափառ Յարութիւնը: Իդիաբեր կիներ ատենցին Յիսուսի Յարութեան ուրախ լուրը: Գերեզմանը թափուր էր եւ կատարուած էր Քրիստոսի խօսքը: Պետրոս ինք եւս վազեց դէպի թափուր գերեզմանը եւ իր մտքին մէջ զարմացաւ, թէ ի՞նչ պատահած էր:

Իր ուրացումը եւ ձախողութիւնը ձեռով մը մոռնալու համար Պետրոս առաւօտ մը դարձեալ Գալիլիոյ Լիճ գնաց իր նախկին կեանքը եւ գործը շարունակելու համար: Ուրիշ ընկերներ եւս իրեն հետ էին. այդ գիշեր ոչ

Յիշենք այս գիրքին մէջ Պետրոս Առաքելին կատարած կարգ մը գործերը: Հոգեգալստեան Տօնին օրը ան կը խօսի իր առաքելական առաջին ատենաբանութիւնը: Բժշկութիւն կը կատարէ: Հալածանքի կ'ենթարկուի եւ կը բանտարկուի: Կը քարոզէ հեթանոսներուն եւ Աստուծոյ խօսքը կը բերէ Հռոմանցի Կոռնելիոսի:

Պետրոս ներկայ կը գտնուի եւ իր գործօն բաժինը կը բերէ Առաքելական առաջին ժողովին մէջ, որուն մասին կը կարդանք Գործք Առաքելոցի 15-րդ Գլխուն մէջ: Ան կը ճամբորդէ Անտիոք (Տեսնել Գաղատ. 2:11) եւ Կորնթոս (Տեսնել Ա. Կորնթ. 1:12): Սակայն քիչ բան ծանօթ է իր կատարած ճամբորդութիւններուն եւ գործերուն մասին: Միայն իր գրած Առաքելական նամակներուն շնորհիւ մենք վերահասու կը դառնանք իր ներքին զարգացումներուն եւ Քրիստոնէական հաւատքի իր ըմբռնումներուն:

Ըստ աւանդութեան Պետրոս Առաքել մեռաւ Հռոմի մէջ: Որքան ժամանակ ան հոն բնակեցաւ իր մահէն առաջ, յայտնի չէ: Եղած աղբիւրները յաճախ իրար կը հակասեն: Իր մահուան ձեւը յիշուած է Քրիստոսի կողմէ. «Սակայն երբ ծերանաս՝ ձեռքերդ վեր պիտի բարձրացնես, եւ ուրիշնե՛ր գօտի պիտի կապեն քեզի ու պիտի տանին՝ ուր որ չես ուզեր երթալ: Այս ըսաւ՝ ակնարկելով թէ ան ի՛նչ մահով պիտի փառաւորէ զԱստուած» (Յով. 21:18—19): Ինչպէս յիշեցինք, Պետրոս Առաքել խաչուեցաւ: Սակայն ըստ աւանդութեան իր գլխիվայր խաչելութիւնը խնդրոյ առարկայ է: Ըստ աւանդութեան Հռոմ հասաւ մեծ հալածանքներու ժամանակ: Պետրոս Առաքել ականատես եղաւ մեծ թիով Քրիստոնէաներու նահատակութեան եւ խոյս տուաւ քաղաքէն: Ծամբան ան տեսաւ մարդ մը որ խաչ մը շալկած կ'երթար դէպի Հռոմ:

Պետրոս կը հարցնէ իրեն «Quo Vadis?» «Յո՞ւ Երթաս» (Ո՞ւր կ'երթաս):

Մարդը կը պատասխանէ. «Հռոմ, դարձեալ խաչուելու համար»:
Այս խօսքին վրայ ան կը վերադառնայ Հռոմ եւ կը նահատակուի:

